130.	Վ. Շենգավիթ 2փ. 1, 2	Ավտոմատիկային կառավարչի կարգավորում
131.	Շարուրի 26, 28	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
132.	Չեխովի 10	Ջրի ճնշումների ստուգում և կարգավորում
133.	Մանթաշյան 4/3	Եռաֆազ թողարկիչի կարգավորում
134.	Թումանյան 5/1	Ճնշումների ստուգում և կարգավորում
135.	Չեխովի 56	Ռետինե խողովակի միացման դետալների նորոգում
136.	Շիրակի 6ա	Թողարկիչի անջատիչի կարգավորում
137.	Նոր Արեշ 12/3	Ճնշումների ստուգում և կարգավորում
138.	Խարբերդ ն/կ	Էլ. մալուխների նորոգում
139.	Վ. Շենգավիթ 20/1	Ավտոմատ անջատիչի կարգավորում
140.	Տիգրան Մեծի 27/1	Ֆիլտրի մաքրում
141.	Արշակունյաց 30	Ալյումինե մալուխի փոխարինում 60մետր
142.	Աբովյան պուրակ ՕԿՁ	հոսքաչափի էլ. մալուխի նորոգում
143.	Շենգավիթ թաղամաս	Կոնգեցիաների էլ. սնուցման միացում
144.	Շարուրի 26	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
145.	Պուշկինի 3	Էլ. թողարկիչի աշխատանքի կարգավորում
146.	Մանթաշյան 28	Ջրի ճնշումների ստուգում և կարգավորում
147.	Բեռնակիրների 85ա	Էլ. հաղորդալարերի կարգավորում
148.	Խուդյակով 70	Էլ. անջատիչի աշխատանքի կարգավորում
149.	Արտաշիայան 81	Ֆիլտրի մաքրում
150.	Ազաթանգեղոս 7	Պ/կ սնող էլ. մալուխի նորոգում
151.	Մասիս, Նորաբաց ՕԿՁ	պումպի էլ. մանոմետրի վերանորոգում
152.	Արցախի 10ա,բ,գ	Մալուխի նորոգում,

153.	Արշակունյաց 46	Էլ. Մալուխի նորոգում
154.	Խարբերդի պ/կ	Էլ. փականի անջատիչի նորոգում
155.	Սարյան 33	Էլ. անջատիչի աշխատանքի կարգավորում
156.	Ն. Շենգավիթ 11փ 37տ	Ջրի ճնշումների ստուգում և կարգավորում
157.	Բագրատունյաց 38/1	Էլ. անջատիչի աշխատանքի կարգավորում
158.	Արմավիր ՕԿՁ	Արտաքին լուսավորության կարգավորում, 30մետր հաղորդալարի տեղադրում, ավտոմատ անջատիչի փոխարինում
159.	Թաղևոսյան 19/3	Ջրի ճնշումների ստուգում և կարգավորում
160.	Ազաթանգեղոս 7	Պոմպակայանում ֆիլտրի մաքրում
161.	Շարուրի 28	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
162.	Վեդի ՕԿՁ	Արտաքին լուսավորության և էլ. մոնտաժային աշխատանքներ, 600մետր հոսանքի լարի փոխարինում, անջատիչների, վարդակների, լամպերի փոխարինում
163.	Նուբարաշենի պ/կ	Ժամանակի ռելեի աշխատանքի կարգավորում
164.	Մանանդյան 3	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
165.	Չեխովի 10	Էլ. Մալուխի նորոգում
166.	Բագրատունյաց 51	Թողարկիչի աշխատանքի կարգավորում
167.	Նոր Արեշ 5/45	Վթարված էլ. մալուխի փոխարինում 210 մետր
168.	Չեխովի 56	Էլ. մալուխի սխեմայի կարգավորում
169.	Խարբերդի պ/կ	Էլ. փականի ավտոմատ անջատիչի փոխարինում
170.	Վեդի ՕԿՁ	Էլ. հաղորդալարերի սխեմայի պարզեցում
171.	Սարյան 4	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
172.	Մանթաշյան 28ա	Ճնշումների ստուգում և կարգավորում
173.	Թումանյան 5/1	Ճնշումների ստուգում և կարգավորում
174.	Պուշկինի 13	Էլ Անջատիչի աշխատանքի կարգավորում
175.	Նորք մարաշ, հոսքաչափ	Վնասված մալուխի նորոգում, 15զճ/ մ մալուխի փոխարինում

1.6. Մեքենա-մեխանիզմներ

Շահագործվող մեքենա-մեխանիզմների պատշաճ շահագործման նպատակով հուլիս ամսվա ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.



Թվով 12 մեքենաների շարժիչները մասնակի նորոգվել են, փոխարինվել են շարժիչի հանդարտիչները, հղկվել և կարգավորվել են գլխիկները, փոխարինվել են կայծամուները և ներդիրները:

Թվով 4 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նոր մարտկոցներով:

Թվով 15 մեքենաների հոսանքները կարգավորվել և

վերանորոգվել են, փոխարինվել են կայծամուները, կայծամումի լարերը, էլ. ռելեները, վառոցքի բանալիները և մալուխները:

Նորոգվել են թվով 9 մեքենաների մեկնարկիչները, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Իրականացվել է թվով 2 էքսկավատորների բազուկների և շերեփների նորոգում:

Նորոգվել են թվով 6 մեքենաների արգելակման համակարգերը. փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Նորոգվել են թվով 2 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիվները, առանցքակալները, խտաբուկները, ներդիրները:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 12 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերանորոգվել են թվով 26 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման խողովակները:



Կատարվել է թվով 6 մեքենաների թափքի նորոգում, ապակիների, ծածկոցի տեղադրում:

Կցորդման համակարգի նորոգումներ են իրականացվել թվով 10 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակները, շաղկապման մեխանիզմները, անջատող առանցքակալները և խտաբուկները:

Իրականացվել է թվով 2 մեքենաների խլացուցիչների նորոգում և փոխարինում, կատարվել են գոդման աշխատանքներ, ռետինների, ներդիրների և խամուտների փոխարինում:

Վերանորոգվել է թվով 6 մեքենաների ջրի մղիչները, փոխարինվել են փոկերը:

Թվով 10 մեքենաների վրա կատարվել է առջևի համակարգի նորոգում. փոխարինվել են գնդավորները, դեկի ձգաձողերը, ուղղորդիչ վռանները, մեղմիչները, անվակուունդի



առանցքակալները, հարվածամեղմիչի զսպակները և հարվածամեղմիչները:

Հետևի համակարգի նորոգումներ կատարվել է թվով 16 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկները, ատամնանիվները, առանցքակալները, կիսաստնիները,



խտաբուկները, մանեկները, սատելիտները:

Փոխարինվել են թվով 3 մեքենաների դեկային մեխանիզմները, ձգաձողերը և խաչուկները, իրականացվել է դրանց կարգավորում:

Բարձր ճնշման հիդրոհամակարգի նորոգումներ կատարվել են թվով 2 մեքենաների և էքսկավատորների

վրա՝ փոխարինվել և նորոգելով հիդրոյուղերը, խտաբուկները, բարձր ճնշման մղիչները:

Փոխարինվել են թվով 73 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման սուսփի, հիդրոհամակարգի յուղերը և գտիչները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, ինչը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները ժամանակին վերացնելուն :

2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Բաժանորդների տվյալներ

Շարունակվում է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.11.2016թ. թիվ 379-Ն որոշմամբ սահմանված կարգով, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման գործընթացը: 01.08.2017թ. դրությամբ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել Երևանի տարածաշրջանից 64.246 , իսկ Մարզերում 63.636 նոր պայմանագիր:

Սակայն կան նաև պայմանագրերի կնքման գործընթացը խոչընդոտող հանգամանքներ. բաժանորդների բնակարանների մշտապես կամ ժամանակավոր փակ լինելը, սեփականատիրոջ բացակայությունը հանրապետությունից, սեփականության (վարձակալության) իրավունքի փաստաթղթերի թերի լինելը, կամ անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի, վավերականության ժամկետի լրացած լինելը և այլն:

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հուլիս ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.



h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	333.337	255.005	76.5
2		Իրավաբանական անձ	17.024	12.310	72.3
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	384.022	230.426	60.0
2		Իրավաբանական անձ	16.025	7.945	49.6

2.2. Հասույթ

Հասույթի հաշվարկման համար հիմք է ծառայում ջրաչափական սարքերի ցուցմունքների ճիշտ և ժամանակին գրանցումն ու մուտքագրումը Ընկերության բաժանորդների տվյալների բազա: Հնարավոր սխալներից և թյուրիմացություններից խուսափելու նպատակով, ջրաչափական սարքերի ցուցմունք գրանցող պատասխանատու աշխատակիցները իրենց ամրակցված սմարթ-հեռախոսների միջոցով լուսանկարահանում են ջրաչափական սարքն ու գրանցում ցուցմունքը: Սմարթ-հեռախոսներում ներդրված հատուկ հավելվածի միջոցով լուսանկարն ու մուտքագրված

ցուցմունքը ինտերնետային կապի միջոցով հաղորդվում է բաժանորդների տվյալների բազայի մոնիտորինգի խումբ, որտեղ այդ տվյալները ենթարկվում են կրկնակի ստուգման: Համեմատվում են լուսանկարում պատկերված ջրաչափական սարքի գործարանային համարը տվյալների բազայում հաշվառված համարի հետ, մուտքագրված ցուցմունքն ու լուսանկարում արտացոլված ցուցմունքը և այլն: Ճշտագրված ցուցմունքները փոխանցվում են բաժանորդների տվյալների բազա, որի հիման վրա ձևավորվում է բաժանորդի հասույթը:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2017թ. բաժանորդների ամսական սպառման ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:



Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է 2017թ. հունիս ամսին Հնկերության Առևտրային տնօրինությունների հասույթի առաջադրանքների կատարողականության ցուցանիշները.

Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք	Փաստացի	Տարբերություն
		հազ.մՅ	հազ.մՅ	%, հազ.մՅ
Երևան	Հունիս	6.523	6.484	-0.60%
Մարզեր		4.318	4.066	-5.83%

Շարունակվում են գրոյական ծախսերի և կասկածելի ջրածախսերի վերաբերյալ վերլուծությունները: Վերլուծությունների արդյունքներով վերահսկողական խմբերի կողմից տեղերում կատարվում են լրացուցիչ ստուգումներ, որոնց ընթացքում հայտնաբերված՝ ջրաչափերով հաշվառված, սակայն բաժանորդների տվյալների բազա չմուտքագրված ծախսերն անմիջապես մուտքագրվում են բաժանորդների հաշվառման քարտերին:

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Տարեթիվ	Երևան	Մարզեր
	Հուլիս	
2016թ.	14.8	10.0
2017թ.	15.3	13.0
Տարբերությունը	0.5	3.0

Հասույթի ճիշտ ձևավորման, այդ նպատակով կատարվող վերլուծությունների արդյունավետության բարձրացման համար ճշգրտվել են իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների գործունեության ոլորտները: Ճշտված տեղեկատվությունը նախատեսված է մուտքագրել բաժանորդների տվյալների բազա: Ոլորտների ճշգրտմանը զուգահեռ, վերահսկողական խմբերի կողմից շարունակվում են ստուգումները՝ ըստ գործունեության ոլորտի, հնարավոր մեծ քանակի ջրօգտագործող կազմակերպություններում:

2.3. Գանձում

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարքերի գանձմանն իրավական ընթացք տալու նպատակով՝ առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.024.561	1.006.737	971.133	964.825	1,057,245	1.057.014	6.081.515
	Հավաքագրում	692.209	1.143.800	887.210	978.278	1,001,569	1.051.079	5.754.145
	%	67.56	113.61	91.36	101.39	94.73	99.44	94.62
Մարզեր	Առաջադրանք	582.951	608.945	594.916	560.140	657.432	659.344	3.663.728
	Հավաքագրում	101.954	592.521	468.175	547.640	561.150	608.411	2.879.851
	%	17.49	97.30	78.70	97.77	85.35	92.28	78.60

2.4 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.08.2017թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Երևան	Ջրաչափով	327.823	253.335	77.3	16.366	12.298	75.1
	Առանց ջրաչափի	5.514	1.670	30.3	658	12	1.8
Մարզեր	Ջրաչափով	334.105	220.920	66.1	14.395	7.922	55.0
	Առանց ջրաչափի	49.917	9.506	19.0	1.630	23	1.41

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում փոխարինվել է շուրջ 3.887, իսկ Մարզերում 3.409 հատ ջրաչափական սարք: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.08.2017թ. դրությամբ հաշվառված պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Երևան	443.409	279.696	63.1	19.024	3.035	16.0
Մարզեր	392.079	79.103	20.2	16.546	1.649	10.0

Պիլոտային ծրագրի շրջանակներում, ս.թ. մայիսի 15-ից Ավան վարչական շրջանում իրականացվում են առկա ջրաչափերը նորերով փոխարինման լայնածավալ աշխատանքներ :

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Թաղամաս	Փոխարինված նոր ջրաչափերի քանակը
Նարեկացի	1330
Հ.Հովհաննիսյան	403
Դ.Վարուժան	367
Քուչակ	735
Իսահակյան	836
Ընդամենը	3671

Ջրաչափերի փոխարինման ծրագիրը շարունակական բնույթ է կրում: Հունիս և հուլիս ամիսներին «Շենգավիթ», «Արաբկիր» և «Սալաթիա-Սեբաստիա» վարչական շրջանների թվով 6.350 բաժանորդներ գրավոր ծանուցվել են ջրաչափերի փոխարինման մասին:

2.5 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում



Շարունակական աշխատանք է տարվում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:



Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար	Վճարում
Երևան	71	43.896	7.394.931	5.680.991
Մարզեր	185	88.800	14.223.889	3.558.650




3.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1.Ջրամատակարարման շարունակականություն

Հաշվետու ամսին Երևան քաղաքի ջրամատակարարման շարունակականության տվյալները կազմել են 97.4%, ինչը 0.3%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:



Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:





Ջրամատակարարման շարունակականությունը (Երևան)



Աշխատանքային վիճակը որոշելու համար կատարվել են թվով 48 ճնշման կարգավորիչ փականների ստուգումներ: Պարզվել է, որ 14 ՃԿՓ-ներ անսարք են, որոնք և տեղափոխվել են համապատասխան ստորաբաժանում՝ անսարքությունները վերացնելու նպատակով:

Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների որոշ գրաֆիկները՝ աշխատանքներից առաջ և հետո.





➤ Հուլիս ամսվա ընթացքում իրականացվել են Նոյեմբերյան քաղաքը սնող «ԳիԺ Մար» կոչվող ջրատար համակարգի ուսումնասիրության աշխատանքներ, որոնց արդյունքում հայտնաբերվել է 1լ/վ ծավալով գաղտնի վրար, որը տեղում վերացվել է:

➤ Երևան քաղաքի Բյուզանդ և Մ.Ադամյան փողոցների խաչմերուկում գտնվող կոյուղատարի վրա, խողովակաշարի ներքին ուսումնասիրման տեսախցիկով, հետազոտվել է կոյուղատարի L=30մ հատվածը (դիտահորերի միջանկյալ հատված): Աշխատանքների արդյունքում պարզվել է, որ դիտահորից մոտ 15մ հեռավորության վրա առկա է խողովակաշարի վրար, ինչն էլ պատճառ էր հանդիսանում կոյուղաջրերի արտահոսքի՝ դեպի «Երևանի Մետրոպոլիտեն»-ի ենթակառուցվածք: Աշխատանքներ են տարվում խնդրի կարգավորման ուղղությամբ:







3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում պոմպակայաններում առաջացած թվով 24 էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով կարգավորվել են: Ուսումնասիրվել է թվով 143 հասցե, թվով 5 պոմպակայաններում հայտնաբերված

թերությունները վերացվել են: Էլ.համակարգի ուսումնասիրության արդյունքում 1 հասցեում հայտնաբերվել է նաև 1.820կՎտ հավելագրում, ինչի մասին տեղեկացվել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատուներին՝ ուղղում կատարելու նպատակով:


Կատարված աշխատանքները ստորև ներկայացված են աղյուսակային տեսքով:

h/h	Հասցե	Կատարված աշխատանք	Ամսական կՎտ/ժ
1	Հովհաննիսյան 119	ռելեի կարգաբերում	1.872
2	Գ.Արծրունի 92,90,88	ռելեի կարգաբերում	
3	Արարատյան 5,7,9	ռելեի կարգաբերում	
4	Բ-1 թաղ. 97	ռելեի կարգաբերում	
5	Ռ.Մելիքյան 2/2	Հավելագրում	1.820




Եղանակային շոգ պայմաններից ելնելով Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ.էներգիաի ծախսը ավելացել է ամսական 976.625կՎտ/ժ (46.06%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ : Մելիսանիկական ջրաքանակը նույնպես ավելացել է 550լ/վ-ով անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի պոմպայկայանների սպառած էլ.էներգիան



Ընկերության ընդհանուր էլ. էներգիայի ծախսը ավելացել է ամսական 1.445.841 Կվտ/ժամով (24.17%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության կողմից սպառած էլ.էներգիան



3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ

- Ջրագրկման ենթակա տարածքների բաժանորդների առանձնացում և արտածում ԱՏ համակարգից՝ բաժանորդների տվյալների բազային կցելու նպատակով:
- «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում՝ տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ համատեղ: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում

Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:


- ՀՀ քաղաքների լոգերների տեղակայման, պոմպակայանների և ջրատարերից սնվող տարածքների քարտեզների պատրաստում և ձայնագրում CD կրիչների վրա:
- Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի վթարների հաճախականության վերլուծական քարտեզների կազմում:
- «Շերամ» ջրամատակարարման գոտու քարտեզի թարմացում:
- Չափագրված կապտածների կոորդինատների ներմուծում ԱՏ համակարգ և «Google Earth» ծրագիր, համապատասխան քարտեզների և երկայնական կտրվածքի տեխնիկական բնութագրերի կազմում:
- «AutoCAD» ծրագրի ֆորմատով Արարատ քաղաքի և հարակից գյուղերի կադաստրային քարտեզի վերափոխում (տրանսֆորմացիա) ԱՏ համակարգ և կապում կոորդինատային համակարգին:
- Բագրևանդ թաղամասի ֆիզիկական և իրավաբանական բաժանորդների առանձնացում, համապատասխան քարտեզի կազմում և տվյալ բաժանորդների ցուցակավորում:
- Արտադրատեխնիկական բաժնի համար թվով 87 հատ վերանորոգվող և վերակառուցվող ջրագծերի և կոյուղագծերի սխեմաների կազմում և տպագրում A4 ֆորմատով:
- Բալախովիտ գյուղի քարտեզի կազմում և տպագրում A0 ֆորմատով:
- Ջրվեժ գյուղի Միկոյան 17/2 հասցեի տարածքով անցնող ջրագծի շրջանցման սխեմայի կազմում և տպագրում A4 և A3 ֆորմատներով:
- «Վարար Աղբյուր» ջրաղբյուրի չափագրված կոորդինատների տեղադրում «Google Earth» քարտեզ:
- Վարչական և ֆինանսական տնօրինության տվյալների բազայի կառավարման և ծրագրավորման վարչության կողմից տրամադրված իրավաբանական ու ֆիզիկական բաժանորդների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում ԱՏ համակարգի տվյալների բազա և բաժանորդների տարածական տեղաբաշխվածության թեմատիկ շերտի կազմում:
- Գործառնական տնօրինության ամսական հաշվետվության համար թվով 12 սխեմաների կազմում «AutoCAD» ծրագրով:

- 1-85 հեռախոսակենտրոնի կողմից գրանցված ջրագծերի և կոյուղագծերի վթարավերականգնողական աշխատանքների վերաբերյալ ինֆորմացիայի մուտքագրում ԱՏ համակարգ:

3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

Հաշվետու ամսվա ընթացքում կարգավարների խմբի կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ.

- Դիլիջան քաղաքում հայտնաբերվել է մոտ 5լ/վ ջրաքանակով վթար, որը նկատելի է դարձել «Դիլիջան-1» և «Դիլիջան-2» ՕԿՁ-ների մակարդակաչափերի նիշերի իջեցումից: Վթարի մասին տեղեկացվել է «Դիլիջան» տեղամասի պետին: Իրականացված որոշակի աշխատանքների արդյունքում ՕԿՁ-ների ջրաքանակը կանոնավորվել է (140մ.խ):



- «Սարչապետ» ՕԿՁ-ի մակարդակաչափի տվյալներին հետևելով, հայտնաբերվել է 5լ/վ ջրաքանակով վթար, որի մասին տեղեկացվել է «Տաշիր» տեղամասի պետին: «Սարչապետ» ՕԿՁ-ից սնվող տարածքը ջրազրկվելով, և իրականացնելով վթարավերականգնողական աշխատանքներ վերականգնվել է Սարչապետ գյուղի ջրամատակարարումը:



4. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Համակարգչային ցանց

Հուլիս ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքները.

- Մեկնարկել է նոր ձեռք բերված «Cisco» երթուղիչների ծրագրավորումն ու ներդրումը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցային միջավայրում՝ համաձայն ցանցային և ինֆորմացիոն անվտանգության քաղաքականության (Աբովյան 66^ա, Լենինգրադյան 50, Ա. Սարգսյան 6):
- Աբովյան 66^ա հասցեում սերվերային և ցանցային տեխնիկայի համալրումից հետո մեկնարկել են հիշյալ սարքերի ծրագրավորման և թեստավորման աշխատանքները: Կատարվել են սթրես-թեստեր, ծրագրային կարգավորումներ, սարքավորումների բեռնվածության վերաբաշխում, մետաղյա ցինկապատ մալուխատարի մոնտաժ:
- Բեռնակիրների 85 հասցեում իրականացվել են համակարգչային ցանցի և տեսահսկման համակարգի արդիականացման աշխատանքներ:
- Լվովյան 2շ. հասցեում կազմվել է համակարգչային և հեռախոսային ցանցերի նախագիծ, կատարվել է տեսահսկման համակարգի մոնտաժ և կարգավորումներ:
- «Սպիտակ» տեղամասում մոնտաժվել է տեսահսկման համակարգ:
- Ադոնցի 6/1 հասցեում մեկնարկ են համակարգչային և հեռախոսային ցանցերի թեստավորման և կարգավորման աշխատանքները:
- Մոնտաժվել և կարգավորվել են համակարգչային և հեռախոսային ցանցերը Աբովյան 62^ա, Բաբաջանյան 3/1, ինչպես նաև Սևան քաղաքի Չարենցի 20 հասցեներում : Պրոֆիլակտիկ և արագ արձագանքման այցեր են կատարվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՀՀ տարածքում գտնվող գրեթե բոլոր հասցեներ, կատարվել է համակարգչային, սպող-պատճենահանող, ցանցային տեխնիկայի զննում և վերանորոգում, տրամադվել է ծրագրային ապահովման աջակցություն:

4.2 Ինտերակտիվ համակարգ

Հաշվետու ամսվա ընթացքում «Ինտերակտիվ» համակարգում կատարվել են մի շարք փոփոխություններ.

- «Ակտեր» (բաժանորդների ապօրինությունների արձանագրում) բաժնում կատարվել են հաշվարկների և արձանագրությունների, ինչպես նաև ծանուցումների

փոփոխություններ՝ համաձայն Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի N378-Ն որոշման:

- «Ինտերակտիվ» համակարգում, ոչ բաժանորդների դեպքում, նույնպես կատարվել են փոփոխություններ՝ համաձայն Կառավարության N658-N որոշման: Ստեղծվել է հնարավորություն ոռոգման պայմանագրերի մուտքագրման, ստուգման և կառավարման մոդել:
- Սերվերային սարքավորումների փոփոխման պատճառով արխիվային նկարները որոշ ժամանակ հասանելի չէին: Այժմ նկարների ցուցադրման համար ստեղծվել է նոր մեխանիզմ, անկախ նրանից, թե որ սերվերում է գտնվում նկարը:


Կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ Հաճախորդների սպասարկման վարչության, Ջրաչափերի կառավարման բաժնի և 1-85 հեռախոսակենտրոնի աշխատակիցների համար՝ կապված «Ինտերակտիվ» համակարգում փոփոխությունների հետ:

Ավարտին են հասցվել Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի, ինչպես նաև Փաստաթղթաշրջանառության համակարգերի ներդրումային աշխատանքները:

4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ

Հաշվետու ամսվա ընթացքում ավարտվել են Բեռնակիրների 85, Լվովյան 2, Բաբաջանյան 3/1, Հալաբյան 5, Արցախի 28 հասցեներում VoIP (օպերատոր՝ Ucom) տեխնոլոգիայով հեռախոսագծերի մոնտաժման և կարգավորման աշխատանքները: Արդյունքում նշված հասցեներում անջատվել են նախկինում օգտագործվող անալոգային հեռախոսահամարները (օպերատոր՝ Beeline):

Ստորև բերված գրաֆիկում ներկայացված է կապի օպերատորների կողմից «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ին մատուցված ծառայությունների արժեքները հունվար-հուլիս ժամանակահատվածում:



5. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հուլիս ամսին ջրի խնդիրը սրվել է Արարատյան դաշտում, մասնավորապես Արմավիրի մարզում, ներառյալ Էջմիածին քաղաքը:

Արտակարգ շոգերով պայմանավորված, ջրի սպառման ծավալների ավելացումը համակարգում ստեղծել էր զգալի լարվածություն, ինչը առաջացրել էր սպառողների դժգոհությունն ու արտահաստվում էր լրատվամիջոցներում:



Բացասական տեղեկատվության հասքը կասեցնելու համար ընկերության Հանրային կապերի ծառայությունը օգտագործել է բոլոր հնարավորություններն ու PR-աշխատանքի ընդունված մեթոդները: Որպես հիմնական «հարվածային ուժ» ծառայել է ՀՀ, Կենտրոն,

Yerevan Today հեռուստալիքները, թվով 5 ամենօրյա թերթեր ու թվով 1 լրատվական կայք: Նույն ՁԼՄ-ների միջոցով հանրությանը մշտապես տեղեկացվել է ընկերության կողմից ջրի պահանջարկը բավարարելու նպատակով ձեռնարկվող միջոցների, համակարգում տարվող ընթացիկ աշխատանքների ու հեռանկարային ծրագրերի, ինչպես նաև ձեռքբերումների մասին: Նաև լուսաբանվել են ամսվա կարևոր իրադարձությունները:

Հուլիսին հանրությանը ծանուցվել է ջրաշինարարության մասին Վեդիում, Աշտարակում, Գուգարքում, Եղվարդում, Ջրաշենում, Վանաշենում, Լեռնապատում, Մուշավանում, Ստեփանավանում, Հրազդանում և այլ բնակավայրերում, առանձնակի ուշադրություն դարձնելով մարզերից ստացվող տեղեկատվությանը: Աշխարհագրական այսպիսի լայն սփռումը բոլորին ցույց է տալիս ընկերության գործունեության մասշտաբներն ու խնդիրների ընդգրկունությունը:



Այդ ընթացքում կազմակերպվել են հեռուստալրագրողների այցեր առավել կարևոր հասցեներով, որոնցից Գյումրին է, որտեղ փաստացի ամփոփվել են 2017թ. առաջին կիսամյակում կատարված աշխատանքները, այնուհետև՝ Սաղմոսավանի ջրաղբյուր, որտեղ վերանորոգվում էին մի շարք կառույցներ: Իսկ Ընկերության հետ

համագործակցող մարզային «Ֆորտունա» ու «Քյավառ» հեռուստաընկերությունների միջոցով, պատրաստվել են ռեպորտաժներ Ստեփանավանից ու Մարտունուց:

Ակտիվորեն օգտագործվել են նաև թերթերի ու լրատվական կայքերի հնարավորությունները: Այսպես, վերը նշված գրեթե բոլոր ելույթները հրապարակվել են «Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության հետ համագործակցող թերթերում ու մի շարք էլեկտրոնային լրատվամիջոցներում:

Մեթոդների առումով, հնարավորինս շատ օգտագործվել է առավել արդյունավետ հանդիսացող հարց ու պատասխանի ձևը, որը կիրառվել է մասնավորապես ընկերության ֆեյսբուկյան էջի միջոցով ստացվող բողոքների նկատմամբ:



Շարունակվում է համագործակցությունը «Yerevan today» առցանց հեռուստաալիքի հետ, որը սկսվել էր հունիսին: «Մեր տան ջուրը» հաղորդման շրջանակներում կայացել է Երևանի տարածաշրջանի առևտրային տնօրեն՝ Արմեն Դուրգարյանի ելույթը՝

ջրաչափերի ցուցմունքների գրանցման կարգի վերաբերյալ:

Հուլիսի 5-ին, ՀՀ Սահմանադրության օրվա կապակցությամբ, ընկերությունը հանրությանն է դիմել պաշտոնական կայքից ու ֆեյսբուկյան էջից: Իսկ հուլիսի 14-ին, Ֆրանսիայի ազգային տոնի առթիվ, Երկիր Մեդիա հեռուստաալիքը ցուցադրել է տեսաֆիլմ Ֆրանսիայի ու ֆրանսիական բիզնեսի մասին Հայաստանում: Դրա մի մասը նվիրված է եղել «Վեոլիա Ջուր» Ընկերությանը: Իսկ Ֆրանսիայի դեսպանատանը կայացած միջոցառման ժամանակ ցուցադրվել է «Վեոլիա Ջուր» Ընկերության պատատար՝ ընկերության լոգոտիպով:



Ամսվա վերջի իրադարձությունը Համապետական շաբաթօրյակն էր, որին «Վեոլիա Ջուր» Ընկերության աշխատակիցների մասնակցության մասին պատմում է «Yerevan Today» առցանց հեռուստաալիքի ընդարձակ ռեպորտաժը,

հրապարակումը ընկերության կայքում, ֆեյսբուկյան էջում ու մի շարք էլեկտրոնային կայքերում: